ՊԵՏՐՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ (1944-2016)

72-րդ տարում կյանքից հեռացավ անվանի պատմաբան, աղբյուրագետ և մատենագետ, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչի պաշտոնակատար, պրոֆեսոր Պետրոս Հովհաննեսի Հովհաննիսյանը:

Պ. Հովհաննիսյանը ծնվել է 1944 թ. հունիսի 22-ին Լենինական (այժմ՝ Գյումրի) քաղաքում՝ Երզնկայից գաղթած ավանդապահ հայ ընտանիքում: 1951-1961 թթ. նա սովորել է տեղի Վլ. Մայակովսկու անվան թիվ 5 միջնակարգ դպրոցում, որը բարձր առաջադիմությամբ ավարտելուց հետո՝ 1962 թ., ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: Երրորդ կուրսից զորակոչվել է խորհրդային բանակ և ծառայել ռազմաօդային ուժերում, իսկ զորացրվելուց հետո՝ 1967-1970 թթ. շարունակել է ուսումնառությունը:

1970-1973 թթ. ԵՊՀ ասպիրանտուրայում ուսանելու տարիներին Պ. Հովհաննիսյանը պրոֆեսոր Սերոբ Պողոսյանի ղեկավարությամբ պատրաստել է և 1976 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Հայաստանի ֆեոդալիզմի դարաշրջանի սոցիալ-տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությունը ակադեմիկոս Հակոբ Մանանդյանի աշխատություններում» թեմայով: 1975-2016 թթ. նա աշխատել է ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում, նախ՝ իբրև կաբինետի վարիչ, այնուհետև՝ ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր: 2013 թվականի մարտից ստանձնել է այդ նույն ամբիոնի վարիչի պաշտոնակատարի պարտականությունները:

1992-1993 թթ. Պ. Հովհաննիսյանը դասավանդել է նաև Համազգայինի Բեյրութի Հայագիտական բարձրագույն հիմնարկում, 1995-1999 թթ.՝ համատեղությամբ աշխատել է Սևանի Վազգենյան հոգևոր դպրոցում, իսկ 1999 թվականից՝ Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանում (Աստվածաբանական համալսարանում):

Պ. Հովհաննիսյանն իր կյանքի շուրջ քառասուն տարիներ նվիրաբերել է դասախոսական աշխատանքին և իր մեծ ավանդը ներդրել երիտասարդ սերունդների ոչ միայն կրթության, այլև դաստիարակության գործում: Նա

ղեկավարել է տասը ասպիրանտների, որոնցից վեցը պաշտպանել են թեկնածուական ատենախոսություններ:

Հանգուցյալ պատմաբանը մեծ ներդրում ունի ոչ միայն բուհական, այլև դպրոցական դասագրքերի ստեղծման գործում: Նա հանրակրթական դպրոցի 4-10-րդ դասարանների «Հայոց եկեղեցու պատմություն» (2002-2013), 5-րդ դասարանի «Հայրենագիտություն», 6-րդ և 7-րդ դասարանների, ինչպես նաև ավագ դպրոցի 10-րդ դասարանի «Հայոց պատմություն» (2007-2013) դասագրքերի համահեղինակներից և խմբագիրներից է: 2009 թ. նա արժանացել է «Հայաստանի վաստակավոր մանկավարժի», իսկ 2011 թ.՝ պրոֆեսորի կոչումների:

Իր մանկավարժական ակտիվ աշխատանքը Պ. Հովհաննիսյանը հաջողությամբ զուգակցել է գիտական բեղուն գործունեությանը, որը ծավալել է չորս հիմնական և խիստ կարևոր պատմագիտական ուղղություններով: Հայ ժողովրդի միջնադարյան պատմությանն առնչվող հարցերի ուսումնասիրությունից զատ նա զբաղվել է նաև աղբյուրագիտությամբ, պատմագրությամբ և մատենագիտությամբ: Նրա գրչին են պատկանում 400-ից ավելի տպագիր աշխատանքներ՝ գրքեր, հոդվածներ, ժողովածուներ, ակնարկներ: Ուսանողական և գիտական հանրության համար մեծ արժեք են ներկայացնում նրա աշխատակցությամբ հրատարակված «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա» (հ. 1-ին, 1981, 2007, հ. 2-րդ, 2011), «Ամենայն հայոց կաթողիկոսներ» (2001), «Հայ եկեղեցու հանրագիտարան» (պրակ Ա, 2008), «Նշանավոր ճեմարանականներ» (պրակ 1-2, 2005, 2009) գրքերը, ինչպես նաև նրա գրչին պատկանող «Հայ ազատագրական շարժումները (XV դարի կես-XVIII դարի վերջ)» (2010) դասախոսությունների ժողովածուն:

Պ. Հովհաննիսյանը բազմիցս անդրադարձել է թե՛ հայ հին պատմիչների երկերի և թե՛ իր ժամանակակից պատմաբանների գործունեության գիտական վերլուծությանը: Նրա աշխատասիրությամբ և խմբագրությամբ լույս են ընծայվել նաև 70-ից ավելի պատմագիտական աշխատություններ: Գիտական հանրության համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում նրա նախորդների աշխատությունների հրատարակությունները, ինչպիսիք են Աշոտ Հովհաննիսյանի «Պատմագիտական ուսումնասիրությունները» (2007), Ավետիս Պերպերյանի «Պատմություն հայոցը» (2009), Կ. Տեր-Մկրտչյանի «Հայոց եկեղեցու պատմությունը» (մասն Ա, 2011), Հակոբ Զորյանի «Պատմագիտական ուսումնասիրությունները» (2015) և այլն:

Այդուհանդերձ, հարկ է առանձնացնել Պ. Հովհաննիսյանի մեծ նվիրումը հայ մեծանուն պատմաբան Նիկողայոս Ադոնցին, որի մասին հրատարակել է ավելի քան 60 հոդվածներ և հրապարակումներ: Նրա աշխատասիրությամբ լույս են ընծայվել ոչ միայն Ադոնցի «Երկերի» Ա-Զ հատորները (2006-2012) (առաջիկայում լույս կտեսնի նաև նրա նամակագրությունն ընդգրկող յոթերորդ հատորը), այլև նրա տարբեր ուսումնասիրությունները՝ «Հայկական հարցը» (1996), «Պատկերների խնդիրը» (2003), «Քննություն Մովսես

Կաղանկատվացու» (2005), «Հայաստանի ոսկեհանքը» (2006), «Տիգրան Մեծը» (2010): Պ. Հովհաննիսյանի ջանքերի շնորհիվ հայերեն թարգմանությամբ հրատարակվել են նաև Ադոնցի տարբեր անտիպ աշխատությունները, որոնք նա հայտնաբերել է Բեյրութում պահվող նրա անձնական արխիվում:

Մեծ էր Պ. Հովհաննիսյանի ակնածալից վերաբերմունքը նաև Հակոբ Մանանդյանի նկատմամբ: Նա ոչ միայն նրա գիտական գործունեության որոշ դրվագների նվիրեց իր թեկնածուական ատենախոսությունը, այլև հետագայում հրատարակեց նրա «Երկերի» 7-րդ և 8-րդ հատորները (2010, 2011), ինչպես նաև «Ժամանակակիցները Հակոբ Մանանդյանի մասին» (2010) բավականին հետաքրքիր ժողովածուն:

Պ. Հովհաննիսյանը անժխտելի ներդրում ունի նաև մատենագիտական գրականության բնագավառում: Նա հրատարակել է Հ. Մանանդյանի (1981), Ծատուր Աղայանի (1983) կենսամատենագիտությունները: Հատկապես հիշատակելի են, սակայն, Է. Բաբայանի աշխատակցությամբ նրա լույս ընծայած «Հայկական հարց. Հայոց ցեղասպանություն» ռուսալեզու գրականության (1877-1997) մատենագիտությունը (1998) և «Մովսես Խորենացի. մատենագիտություն» ստվարածավալ աշխատանքը (2013):

Նա գործուն մասնակցություն է ունեցել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմություն» բազմահատորյակի II և III հատորների (2010, 2014) հրատարակությանը, գրել հոդվածներ՝ նվիրված XVII-XVIII դարերի հայ պատմագիտական մտքին: Հեղինակել է մեծաքանակ բառահոդվածներ «Հայկական սովետական հանրագիտարան», «Հայկական համառոտ հանրագիտարան», «Հայկական հարց», «Քրիստոնյա Հայաստան», «Ո՞վ ով է» հանրագիտարանների համար:

Պ. Հովհաննիսյանը գիտական տարբեր հանդեսների՝ «Բանբեր Երևանի համալսարանի. հայագիտություն», «Պատմություն և մշակույթ», «Սփյուռքագիտություն», «Հայագիտությունը դպրոցում», «Ակունք» խմբագրական խորհուրդների անդամ էր: Գիտական բարձր պատասխանատվությամբ նա բազմիցս ներկայացրել է պատմագիտական միտքը միջազգային գիտաժողովներում՝ Մոսկվա, Մոնպելիե, Բեյրութ, Սոֆիա և այլուր:

Գիտամանկավարժական բեղուն գործունեության համար Պ. Հովհաննիսյանը պարգևատրվել է կառավարական շնորհակալագրերով և պատվոգրերով, իսկ ծննդյան 60-ամյակի կապակցությամբ՝ «Ս. Սահակ-Ս. Մեսրոպ» Հայոց եկեղեցու բարձրագույն շքանշանով:

Ճանաչված պատմաբանի, սիրված դասախոսի և ազնիվ քաղաքացու հիշատակը միշտ վառ կմնա նրա գործընկերների, ուսանողների, նրան ճանաչողների և հարազատների սրտերում:

ԵՊՀ ռեկտորատ
Հայագիտական հետազոտությունների ինստիտուտ
Պատմության ֆակուլտետ